

636

u-46

05.04.2013

Հ. Ս. Խ. Հ. ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ ԱԳՐՈՏԵԽՆՈԳՐՈՎՍԵՆՈՐ **SEP 2010**

636
5-46
պ'

Ս. ՅԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՅԵՎ Ա. ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՄԱՏՂԱԶՆԵՐԻ ԽՆԱՄՔԸ


49
37

2446

Ն. ՄԱԼԱԹՅԱՆԻ խմբագրությամբ յե՛վ հավելումներով

Նվիրում եմք Ուզունլարի «Մայիսի 1»-ի անվան
կոլեկտիվին

ՅԵՐԵՎԱՆ 1933



Պետերատի տպարան
Գլավիտ № 9174
Պատվեր № 444
Տիբաթ 2000

Սրբազրեցին՝

Ս. Հակոբյան.

Վ. Մանուկյան

ՄԱՏՂԱՇՆԵՐԻ ԴԱՀՊԱՆՈՒՄՆ ՈՒ ԱՃՈՒՄՆ ՈՒՆԻ ԽՈՇՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՅԵՎ ԲԱՂԱԲԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Խորհրդատեսական և կոլտնտեսական անասնաբուծության ներկա ծավալուն շինարարության շրջանում մատղաշների պահպանման ու աճեցման խնդիրն ունի խոշոր և բացառիկ տնտեսական ու քաղաքական նշանակություն:

Տնտեսության մեջ մեծացված մատղաշների միջոցով մենք վոչ միայն պետք է վերականգնենք մեր նախնիների ու հոտերի քանակը (վորը վորոշ չափով պակասել է վերջին տարիներս՝ կուլակային ազդեցության կողմնակցության ֆրոնտում թույլ տրված «ձախ» վարչարարության բնույթ կրող առանձին սխալների հետևանքով), այլ և պետք է ապահովենք նրանց (նախնիների) հետագա քանակական աճն ու զարգացումը:

Վերադաս որդանների վորոշման համաձայն մեր անասնաբուծական սոցսեկտորի նախնիների և հոտերի վերականգնումն ու ընդարձակումն այսուհետև պետք է տեղի ունենա առավելապես ի հաշիվ տնտեսության մեջ մեծացված մատղաշների Այսպես՝ Միութենական Ժողովուրդների, Համ. Կ. (բ) Կ.-ի և Միութենական Հողժողովուրդների «Անասնապահական խորհրդատեսությունների մասին» հայտնի վորոշման մեջ ասված է՝ «Թե հին և նոր անասնաբուծական խորհրդատեսությունների կոմպլեկտավորումը տավարով և խոզերով Սայուզմիասի հաշվին դադարեցնել այն հաշվով, վոր հետագայում խորհրդատեսությունների նախնի աճը կատարվի ի հաշիվ իրենց սեփական մասնաբաժնի: Ինչ վերաբերում է կոլտնտեսություններին, ապա նրանց մասին ևս Համ. Կ. (բ) Կ. ի, «Անասունների հարկադիր հանրայնացման մասին» վորոշման մեջ ասված է՝ «կոլսոցսեկտորի Ֆերմաների հետագա ընդարձակումն ու զարգացումը պետք է տեղի ունենա միայն ի հաշիվ Ֆերմաներում անցկացված մասնաբաժնի կամ գնված անասունների»:

Այստեղից պարզ է, վոր մատղաշների պահպանման և մեծացման խնդիրը մեր անասնաբուժական սոց-սեկտորի՝ կոլտնտեսությունների և խորհրդանտեսությունների կենտրոնական և ամենապատասխանատու աշխատանքներից մեկն է հանդիսանում: Առանց մատղաշների պահպանման և մեծացման անասնաբուժական սոցսեկտորը չի կարող կարճ ժամանակում կոմպլեկտավորել ու լայնացնել իր նախիրները և լրիվ կերպով կատարել յերկրորդ հնգամյակի քանակական ու վորակական ցուցանիշներն անասնաբուժության բնագավառում:

Դժբախտաբար այս խնդրի լրջութիւնը դեռևս վոչ բոլոր կոլտնտեսությունների ու խորհրդանտեսությունների կողմից է գիտակցվում: Դրան ապացույց է այն հանգամանքը, վոր մեծք դեռ անցյալ տարի մատղաշների մահացութեան մեծ տոկոս ունեւինք մեր մի շարք խորհրդանտեսություններում և կոլտնտեսություններում, վորը վորոշ տնտեսություններում հասավ նույնիսկ 50%-ի և ավելի:

Պակաս չեն այդ խնդրի թերաբանատումը ցույց տվող այլ փաստերը: Որինակ, յեթե վերցնենք սոց-սեկտորի նախիրների կազմը, կտեսնենք, վոր մատղաշները կազմում են նախրի 14,6%-ը (սովխոզներում), իսկ կաթնա-ապրանքային ֆերմաներում ավելի քիչ, մինչդեռ մատղաշների նորմալ տոկոսը պետք է լինի առնվազն նախրի 22%-ը:

Մեկ ուրիշ փաստ. Միս-կաթկենտրոնի տվյալներով 1932 թ. Հայաստանի 60 հորթարուծական ֆերմաներում կա բնդամեծը 4694 հորթ: Այս շատ փոքր թիւ է և յեղած մեծահասակների փոքր տոկոսն է կազմում:

Յեւ վերջապես ունենք կոլտնտեսություններ, վորոնք այս խնդրում իրենց պատասխանատու չեն զգում, յերբեմն փոքր հասակից հորթերի մի մասը մորթում են կամ ծախում, պատճառաբանելով, թե տնտեսությունն ի վիճակի չէ պահելու և մեծացնելու, կամ թե պահելը ձեռնտու չէ տնտեսությանը և այլն:

Նման կարծիքները հակահեղափոխական-կուլակային ագիտացիայի արդյունք են և դրանց պետք է վճռական հակահարված տալ: Բոլոր լավ ծագում ունեցող, առողջ յիվ նորմալ մասդաւները պետք է պահվեն ու մեծացվեն մեծ հոգատուքայմբ:

Սակայն մեր մատղաշների ծնունդն ու հետագա զարգացումը դժբախտաբար դեռևս տեղի յե ունենում մեծ մասամբ հակասանիտարական պայմաններում: Դոմերի կեղտոտութիւնը,

կթողների կեղտոտութիւնը, ամանների, կովի պտուկների անմաքութիւնը նպաստավոր միջավայր են հանդիսանում զանազան հիւանդաբեր միկրոօրգանիզմների զարգացման և հիւանդութիւնների տարածման համար, վորոնց զոհ են գնում մեր դեռևս թույլ, չկազմակերպված մատղաշները, մանավանդ իրենց կյանքի առաջին ամսում: Շատ հաճախ դրան նպաստում է նաև հորթերի կիսաքաղց դրութիւնը: Վատ կերակրվող, ֆիզիկապես թույլ մատղաշներն ավելի շուտ են յենթարկվում այս կամ այն հիւանդութեան մահաբեր ազդեցութեանը և կոտորվում:

Դիտողութիւնները ցույց են տվել, վոր մեր այն կոլտնտեսութիւններում, վորտեղ կան քիչ թե շատ սանիտարական պայմաններ և ուշադիր խնամք դեպի մատղաշները, այնտեղ մահացութեան տոկոսը շատ չնչին է: Մենք կարող ենք իրրև որինակ հիշել Ո զուկարի «Մայիսի 1-ի անվան» կոլտնտեսությունը, վորտեղ արոտային պահվածքի ընթացքում մոտ 100 հորթից միայն 2-3-ը սատկեցին: Նման որինակներ մենք ունենք նաև ուրիշ տնտեսություններում:

Հիմնականն այն է, յե ինչպիսի ձեւերում է զտնտեսման ղեկավարի խնամքի գործը: Քաղաքականապես և տեխնիկապես դիտակից, բարեխիղճ, հարվածային հորթապահների խնամած հորթերը, թեկուզ վոչ այնքան պատշաճ գոմում և կերի պայմաններում, լինում են առողջ, առույգ և խոշոր:

Ընդհակառակը՝ անբարեխիղճ, անգիտակից հորթապահների ձեռքին թեկուզ լավ կահավորված գոմում և առատ կերի պայմաններում հորթերը կլինեն նիհար, թույլ, մանր և մեծ տոկոսով կոտորկեն:

Մատղաշների խնամքը պետք է հանձնարարել քաղաքականապես ու տեխնիկապես գիտակից, բարեխիղճ և հարվածային բանվորներին ու կոլխոզնիկներին: Սրանց միջոցով միայն հնարավոր կլինի կիրառել գիտութեան տվյալները մատղաշների ճիշտ կերակրման, խնամքի և ընտրութեան գործում:

Այս դրբույկը կազմողների նպատակն է իրենց ուժերի չափով ոգնած լինել մեր կոլտնտեսականներին մատղաշների խնամքի և կերակրման գործում: Անշուշտ, գրքույկը չի սպառում մատղաշների խնամքին վերաբերող բոլոր խնդիրները, սակայն իր հենց այս ծավալով, և, վոր գլխավորն է, մատչելի բովանդակութեամբ մեծ ոգուտ կարող է տալ մեր սոցանասնապահութեանը:

Ն. ՄԱԼԱՅԱՆ

ՀՈՐԹԵՐԻ ԽՆԱՄՔԸ

ԱՌՈՂՋ ՅԵՎ ՀՈՐՄԱԼ ՀՈՐԹ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԵՏՔ Ե
ՀՂԻ ԿՈՎԻՆ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԿԵՐԱԿՐԵԼ ՅԵՎ ԽՆԱՄԵԼ

Անասնաբուծութեան փորձը ցույց ե տվել, վոր լավ հորթ
ատացվում ե գլխավորապէս լավ հատկութիւններ ունեցող ծնող-
ներէց, այսինքն՝ լավ ցուլից ե կովից:

Սակայն այդ բավական չե, անհրաժեշտ ե միաժամանակ
մեծ ուշադրութիւն դարձնել հղի կովի կերակրման ե խնամքի
վրա, վորովհետեւ լավ կերակրվող ե խնամվող կովը տալիս ե լավ
ե առողջ սերունդ:

Հղի կովին լավ կերակրելով ու խնամելով մենք միաժամա-
նակ կերակրում ու խնամում ենք ապագա հորթին, վորովհետեւ
հորթի կյանքն իսկապէս սկսվում ե հենց մոր արգանդում լեղած
ժամանակվանից:

Այդ անհրաժեշտ ե մանավանդ հղութեան վերջին շրջանում
(վերջին 3 ամիսներին), յիթե հորթը մոր արգանդում ավելի արա-
գորեն ե զարգանում ե շատ սնունդ ե պահանջում. իսկ հորթը
շատ սնունդ կստանա այն ժամանակ, յիբրե մայրը լավ կսնվի:
Հղի կովերին կերակրելը շատ պատասխանատու գործ ե, վորով-
հետեւ տարբեր ամիսներում ծնող կովերի նկատմամբ տարբեր
խնամք ե տարբեր կերակրման տեխնիկա պետք ե գործադրել:

Հենց այդ նպատակով ել հղի կովերը պետք ե դասավորել ըստ
ամիսների, որինակ՝ հունվարին ծնածներն առանձին, փետրվա-
րինը՝ առանձին, մարտինը՝ առանձին ե այլն:

Այսպիսի դասավորում հնարավոր կլինի կատարել միայն
այն դեպքում, յիթե տվյալ ֆերման կամ կոլտնտեսութիւնն ունի
կանոնավոր բեղմնավորման պլան ե գրի յե առնված չուրաքան-
չույր կովի բեղմնավորման որը (տես յերես 8, հղութեան որա-
ցույցը): Հորթը մոր արգանդում սնվում ե ի հաշիվ մոր ստացած
սնունդի (արլան միջոցով), այդ իսկ պատճառով հղի կովին, բա-

ՀԱՆՈՒԹՅԱՆ ՈՐԱՑՈՒՅՑ

(Խոնչպես իմանալ թե կովը յժրը կծնի, յեթե հայտնի յե բեղմնավորման օրը)

Եթե կովը կծնի	Եթե կովը կծնի	Եթե կովը կծնի	Եթե կովը կծնի	Եթե կովը կծնի	Եթե կովը կծնի
Հունվար	Հոկտեմբեր	Մայիս	Փետրվար	Սեպտեմբեր	Հունիս
1-ին	7-ին	1-ին	4-ին	1-ին	7-ին
5-ին	11-ին	5-ին	8-ին	5-ին	11-ին
10-ին	16-ին	10-ին	13-ին	10-ին	16-ին
15-ին	21-ին	15-ին	18-ին	15-ին	21-ին
20-ին	26-ին	20-ին	23-ին	20-ին	26-ին
25-ին	31-ին	25-ին	28-ին	25-ին	1-հունիս
Փետրվար	Նոյեմբեր	Հունիս	Մարտ	Հոկտեմբեր	Հուլիս
1-ին	7-ին	1-ին	7-ին	1-ին	7-ին
5-ին	11-ին	5-ին	11-ին	5-ին	11-ին
10-ին	16-ին	10-ին	16-ին	10-ին	16-ին
15-ին	21-ին	15-ին	21-ին	15-ին	21-ին
20-ին	26-ին	20-ին	26-ին	20-ին	26-ին
25-ին	1 դեկտեմբեր	25-ին	31-ին	25-ին	31-ին
Մարտ	Դեկտեմբեր	Հուլիս	Ապրիլ	Նոյեմբեր	Ոգոստոս
1-ին	5-ին	1-ին	6-ին	1-ին	7-ին
5-ին	9-ին	5-ին	10-ին	5-ին	11-ին
10-ին	14-ին	10-ին	16-ին	10-ին	16-ին
15-ին	19-ին	15-ին	20-ին	15-ին	21-ին
20-ին	24-ին	20-ին	25-ին	20-ին	26-ին
25-ին	29-ին	25-ին	30-ին	25-ին	31-ին
Ապրիլ	Հունվար	Ոգոստոս	Մայիս	Դեկտեմբեր	Սեպտեմբեր
1-ին	5-ին	1-ին	7-ին	1-ին	6-ին
5-ին	9-ին	5-ին	11-ին	5-ին	10-ին
10-ին	14-ին	10-ին	16-ին	10-ին	15-ին
15-ին	19-ին	15-ին	21-ին	15-ին	20-ին
20-ին	24-ին	20-ին	26-ին	20-ին	25-ին
25-ին	29-ին	25-ին	31-ին	25-ին	30-ին

ցի կենսապահ կերից, պետք է տալ հավելյալ կեր՝ իր արգանդի հորթի զարգացման համար, հակառակ դեպքում նրա զարգացումը տեղի կունենա ի հաշիվ իր մոր մարմնի, վորի հեռանալով մայրը կնիհարի և ծնելուց հետո քիչ կաթ կտա:

Հորթը մոր արգանդում իր զարգացման համար մեծ կարիք է դրում նաև հանքային նյութերի, վորոնք նրա վոսկրակազմի հիմնական բաղադրիչ մասն են կազմում, առանց վորոնց նորմալ օրգանիզմ չի ստացվի:

Գրականության մեջ արձանագրված են շատ դեպքեր, յերբ հղի կովն անկանոն կերակրվելու հետևանքով, հատկապես հանքային նյութերով աղքատ կերեր ստանալու դեպքում, ծնում է վոչ նորմալ թերազարգացած հորթեր:

Պարզ է, վոր նման դրույթունից խուսափելու համար հղի կովերին պետք է տալ հանքային նյութերով հարուստ կերեր, քանի վոր բոլոր կերերն այդ տեսակետից հավասար արժեք չեն ներկայացնում:

Պատահում են դեպքեր, յերբ հորթերը հանքային նյութերի պակասության պատճառով սատկած են ծնվում, բայց պատահում է նաև, վոր ծնվում են կենդանի, մեծանում և կով ել են դառնում, սակայն այդպիսի կովը շատ ցածր արտադրողականություն է ունենում և իր հերթին տալիս է վատ, անառողջ սերունդ:

Հանքային նյութերի պակասության պատճառով յերբեմն կովերը վիժում են կամ ժամանակից շուտ են ծնում:

ԱՌՈՂՁ ՅԵՎ ՆՈՐՄԱԼ ՀՈՐԹ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ Ե
ՆԱՅԵՎ ՀՂԻ, ԲԱՅՑ ԿԹՎՈՂ ԿՈՎԵՐԻՆ ԺԱՄԱՆԱԿԻՆ
Ց Ա Մ Ա Ք Ե Ց Ն Ե Լ

Նորածին հորթերն աննորմալ կամ թույլ զարգացած են լինում նայել ախ ժամանակ, յերբ նրանց մայրերին հանգստանալու ժամանակ չենք տալիս, այսինքն՝ ժամանակին չենք ցամաքեցնում: Այդ վերաբերում է հատկապես յերկար կամ անընդհատ լակտացիա ունեցող կովերին, վորոնք կթվում են յերբեմն մինչև ծնելու օրն անգամ:

Մինչդեռ հղի կովին պետք է առնվազն 1 և կես—2 ամիս ցամաքի շրջան տալ, վորպեսզի նա այդ ժամանակամիջոցում

հանգստանա, իր կորցրած ուժերը վերականգնի և միևնույն ժամանակ բավարարի արգանդում արագ զարգացող պտղին: Յեթե հղիության վերջին շրջանում գտնվող կովը միաժամանակ և կաթ և տալիս, նա չի կարող իր արգանդում գտնվող հորթին նորմալ սնունդ տալ, վորովհետև նա իր ընդունած սնունդի մեծ մասը ծախսում է իր մարմնի կենսական պահանջները բավարարելու և կաթ տալու համար, իսկ պտղի զարգացման համար քիչ սնունդ է մնում, վորը չի կարող բավարարել նրան, վորովհետև նա վերջին ամիսներին արագորեն զարգանում է և մեծ քանակությամբ սնունդ է պահանջում: Բացի այդ, մինչև վերջը կթվող կովը ծնելիս դալ չի ունենում և, այդպիսով, նորածին հորթը զրկվում է այդ անփութարիներին սնունդից, վորը մեծ նշանակություն ունի հորթի ստամոքսի նորմալ զործունեություն և աճման համար:

Այսպես ուրեմն, նորմալ և առողջ հորթ ստանալու համար անհրաժեշտ է՝

1. Տարբեր ամիսներին ծնող կովերին առանձնացնել միմյանցից:
2. Ծնելուն մոտիկ կովերին կատամամբ տանել հատուկ խնամք:
3. Հղի կովերին տալ առնվազն 1 և կես-2 ամիս ցամաքի շրջան:
4. Կանոնավորել նրանց կերակրման գործը (ժամանակին կերակրել, տալ դուրամարս, սննդարար և սպիտակուցով ու հանքային նյութերով հարուստ, լավորակ կերեր):

ԻՆՉՊԵՍ ՑԱՄԱՔԵՑՆԵԼ ՀՂԻ ԿՈՎԻՆ

Հղի կովին ցամաքեցնելը դժվար չէ: Հարկավոր է գործադրել հետևյալ միջոցները:

Նախ և առաջ պետք է աստիճանաբար պակասեցնել նրան արվող խտացրած և հյութալի կերերը, ապա միաժամանակ սկսել կթել ընդմիջումներով որընդմեջ, 2 օրը մեկ անգամ և այսպես, մինչև լրիվ ցամաքելը:

Ցամաքեցնելուց մի քանի օր հետո պետք է սկսել առաջվա չափ կեր տալ:

Պետք է խուսափել միանգամից ցամաքեցնելու փորձերից, վորովհետև նման դեպքում կաթը միանգամից չի ցամաքում, այլ կուտակվում է կրծի մեջ, իսկ կուտակված կաթը կրծի համար

մեծ չարիք է, և զանազան հիվանդությունների պատճառ է դառնում: Պատահել են դեպքեր, յիբր կովին միանգամից ցամաքեցնելու հետևանքով կրծում կուտակվել է մեծ քանակությամբ կաթ, վորը լերկար մնալով կրծում՝ կուրծը հիվանդացել է և այդպիսով մի քանի տեղով ծածկվել է կամ պտուկները փչացել են և այլն:

ԴԱՆԻ ԿՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՐԹԻ ՀԱՄԱՐ

Դալը նորածին հորթի համար անփութարիներին կեր է, վորովհետև ունի 2 խոշոր նշանակություն՝

1. Հարուստ է հանքային նյութերով և դուրամարս սպիտակուցներով, վորոնք, ինչպես ասացինք, մեծ նշանակություն ունեն նորածին հորթի զարգացման համար:

2. Լուծողականի դեր է խաղում, մաքրում, դուրս է հանում մոր արգանդում լեղած ժամանակ հորթի աղիքների մեջ հավաքված կեղտոտությունները, հակառակ դեպքում՝ այդ կեղտոտություններին հորթի մարսողությունը խանգարվում է և հորթը հաճախակի հիվանդանում է:

Սովորական կաթի հետ համեմատած՝ դալը 1 և կես—2 անգամ ավելի հարուստ է չոր նյութերով և հանքային նյութերով, ուրեմն կրկնակի անգամ ավելի սննդարար է:

Սակայն, հակառակ դալի այդ նշանակությանը, ցավօք սրտի դեռ մեր դուրսերում տարածված է այն սխալ կարծիքը, թե դալը բացասաբար է ազդում հորթերի վրա և նրանից հորթը հիվանդանում է սպիտակ փորլուծով:

Այդ է պատճառը, վոր վորոշ տեղերում հորթերին դալ չեն տալիս:

Մեր կուխոջները պետք է պալքարեն նման անհեթեթ մղտքերի դեմ, պետք է նոր ծնված հորթին անպայման կերակրեն իր մոր դալով և մենատնտեսների համար որինակ հանդիսանան այդ գործում:

Առաջին անգամ հորթին դալ կարելի չէ տալ մորը անմիջապես կթելուց հետո՝ ծնելուց ամենաշուտը 2—3 ժամ հետո, ամենաուշը՝ 6—7 ժամ հետո:

Յեթե կովը կթվում է առանց հորթի, ապա դալը պետք է խմացնել հորթին թարմ վիճակում, կթելուց անմիջապես հետո, վորպեսզի չսառչի: Դալի ջերմաստիճանը պետք է լինի 35° Ց, և այլն:

Իսկ յեթե կթելուց անմիջապես հետո հնարավոր է գալ խմացնել և ֆուլմ, սառչում է, ապա պետք է այն տաքացնել հետեյալ ձևով՝

Պետք է լցնել վորեկի ժաքուր ամանի (դուլլ) մեջ և այդ ամանը պահել տաք ջրի մեջ այնքան ժամանակ, վոր նրա ջերմաստիճանը հասնի 35 աստիճանի:

Կրակով տաքացնելն անպատահանարժար է, վորովհետև ուժեղ տաքությամբ թյունից դալը մակարդվում է:

Առաջին անգամ հորթին պետք է դալ տալ 1-2 բաժակից վոչ ալիլի, նալած հորթի մեծությունը, որական առնվազն 3-4 անգամ և այնուհետև աստիճանաբար ավելացնել: Իսկ յեթե հորթը մորը ծծում է, չպետք է թուլլ տալ, վոր նա չափից դուրս շատ ծծի, վորովհետև նման դեպքում կարող է մարսողություն խանգարում առաջ գալ:

ԿԱԹԻ ՆՈՐՄԱՆԵՐԸ ԿԱԹՆԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Հորթին կաթնալիին շրջանում պետք է տալ իր քաշի $\frac{1}{7}$ — $\frac{1}{6}$ մասի չափով կաթ:



Նկ. 1. Յերեղ քաշած կաթով կերակրված յեղ ճորձով զարգացած հորթ:

Երկրորդ անգամ կաթով պետք է կերակրել ամենաքիչը 2-3 ամիս:

Կաթնալին շրջանում հորթին անպայման անարատ կաթ պետք է տալ առնվազն 15 որ վորից հետո կարելի չէ անարատ կաթի քանակն աստիճանաբար պակասեցնել և ավելացնել համապատասխան սննդի չափով քաշած կաթ (Նկ. 1):

Կաթի քանակը պետք է համապատասխանի հորթի աճին, դրա համար անհրաժեշտ է յուրաքանչյուր 10-որակում կշռել հորթին և ըստ այնմ ել ավելացնել կաթի քանակը:

2-րդ տասնորյակի սկզբից պետք է սկսել հորթերին սովորեցնել խոտ և ուժեղ կերեր ուտելուն (առվույտի կամ լեռնաբուսի փափուկ խոտ, վարսակի կամ գորու ալյուր և այլն) այն հաշվով, վոր յերրորդ տասնորյակի սկզբից այդ կերերը նրա ամբողջ սննդի զգալի մասը կազմեն: Ուժեղ կերերը սկզբում պետք է կերցնել լափի ձևով, կաթի մի սալի հետ խառնած, իսկ մի վորոշ ժամանակ հետո՝ աստիճանաբար սովորեցնել չոր դրուխթյամբ ուտելուն:

Կոպիտ կերերը պետք է տալ չափավոր: շատ կոպիտ կերերով մեծացած հորթերը նորմալ չեն դարձանում և առնանում են կախ ընկած փոր: (Տես նկ. 2):



Նկ. 2. Մեծ քանակությամբ կոպիտ կերերով կերակրված հորթ՝ կախ ընկած փորով:

3-րդ դեկադի (տասնորյակ) վերից պետք է գերակշռի քաշած կաթը: Քաշած կաթը պետք է խմցնել 60-80 աստիճան տաքացնելուց (պատրոլը դալի) և մինչեւ 35 աստիճան հովացնելուց հետո:

5-րդ տասնորյակից սկսած կարելի չէ տալ նաև կտավատի քուսպ և թեփ:

Այս կերերի հետ միասին առաջին տասնորյակի կիսից պետք է տալ առնա մի հորթին մեկ թեյի գդալ աղ, իսկ 3-րդ տասնորյակից սկսած՝

Բյակի սկսբից՝ որական յուրաքանչյուր հորթին պետք է տալ 25-30 գրամ կալիք (խառնելով ուժեղ կեղերի կամ կաթի հետ):

Մադրև տալիս ենք հորթերի կաթնային շրջանի կերակրման սխեման (ըստ Մասլոտրենսոյի) (տես լերես 15):

Կաթնային շրջանի տեղողթյունը ինն տասներորյակ է, վորի ընթացքում հորթն ստանում է 170 կլգ. անարատ կաթ, 250 կլգ. քաշած կաթ և 48 կիլոգր. ուժեղ կերո՛ւ։

ԻՆՉՊԵՍ ՍՈՎՈՐԵՑՆԵԼ ՀՈՐԹԻՆ ԿԱԹ ԽՄԵԼԸ

Հորթին ամանից կաթ խմելը սովորեցնում են հետևյալ ձևով։
Նախ հորթ կերակրողն իր յեղունգները կտրում և ձեռքերը մաքուր
սապոնով լվանում և, ապա ցուցամատը կեռ դրությամբ դնում և
հորթի բերանը, հորթն սկսում և մատը ծծել, հենց այդ դուռ-
թյամբ կաթ խմցնողը հորթի գլուխը կռահնում և կաթի ամանի
վրա և ձեռքը մտցնում և կաթի մեջ, հորթն այդ վիճակում մատը
ծծելով միաժամանակ կաթ և խմում։

Այդ դրությամբ մատը քիչ ալահելուց հետո դուրս ե հանում ամանից, իսկ հորթը շարունակում ե կաթ խմել ամանից: Մեկ-
 քիբկու անգամ ալդպէս անելուց հետո հորթը սովորում ե ինք-
 նուրուէն կաթ խմել:

Հորթերին կերակրելը շատ պատասխանատու գործ է, բա-
վական է, վոր առանց չափի, կեղտոտ ձեռքերով և կեղտոտ ա-
մաններով կերակրեցիք, այդ պատճառ կդռնաք մի շարք հի-
վանդությունների առաջ գալուն: Դրա համար ել հորթը պետք է
կերակրել մեծ զգուշությամբ, պահպանելով վերին աստիճանի
մաքրություն: Ուստի տնհրաժեշտ է՝

1. Հորթերի համար ունենալ սպիտակ թիթեղից պատրաստ-ված կաթի ամաններ (դուլլեր):
2. Յուրաքանչյուր հորթի համար մեկ սրբիչ. կաթ խմելուց հետո զնչերը սրբելու համար:
3. Հորթին պիտի տալ թարմ, անձրատ կաթ և տաքացրած քաշած կաթ:
4. Կաթի ջերմությունը պիտի լինի 35-38 աստիճանի սահ-մաններում:
5. Կերակրելուց հետո կաթի ամաններն անմիջապես պիտի մաքրել յեռացրած ջրով կամ կրաջրով և այլն:

(ՀՈՐԹԵՐԻ ԿԱՅՆԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ ԿԵՐԱԿՐՄԱՆ ՆԽԷՄԱՆ ԸՍՏ ՄԱՍԼՈՏՐԵՍԿԻ.)

Դիվիզիոն	Ա Ն Ա Ր Ա Տ Կ Ա թ										Գ Ա Շ Ա Մ Կ Ա թ										Խոտորած կերեր				
	Ո Ր Ե Ր										Ո Ր Ե Ր										Խորոջ վտ-ուղիտակ	Փգժ	տտկ		
	1	2	3	4	5	6	7	8	9	10	1	2	3	4	5	6	7	8	9	10					
1.	1,5	2,0	2,5	2,5	3,0	3,5	4,0	4,0	4,5	4,5	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
1.	5,0	5,0	5,0	5,5	5,5	5,5	6,0	6,0	6,0	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
3.	5,5	5,5	5,0	5,0	4,5	4,5	4,0	4,0	4,0	4,0	0,5	1,0	1,5	1,5	2,0	2,0	2,5	2,5	2,5	2,5	0,1	—	—	—	—
4.	3,0	3,0	3,0	3,0	2,0	2,0	2,0	2,0	2,0	2,0	3,5	3,5	3,5	4,5	4,5	4,5	4,5	4,5	4,5	4,5	0,3	—	—	—	0,2
5.	2,0	2,0	1,5	1,5	1,0	1,0	1,0	1,0	1,0	1,0	4,1	4,5	5,0	5,0	5,0	5,0	5,0	5,0	5,0	5,0	0,4	0,1	—	—	0,5
6.	—	—	—	—	—	—	—	—	—	—	5,0	5,0	5,0	5,0	5,0	5,0	5,0	5,0	5,0	5,0	0,5	0,2	0,2	0,2	0,8
7.	—	—	—	—	—	—	—	—	—	—	4,5	4,5	4,5	4,5	4,5	4,5	4,5	4,5	4,5	4,5	0,5	0,2	0,2	0,2	1,0
8.	—	—	—	—	—	—	—	—	—	—	3,0	3,0	3,0	3,0	3,0	3,0	3,0	3,0	3,0	3,0	0,6	0,3	0,2	0,2	1,2
9.	—	—	—	—	—	—	—	—	—	—	2,0	2,0	2,0	2,0	1,0	1,0	1,5	1,5	1,5	1,5	0,6	0,4	0,2	0,2	1,5

1704.

ST. JOHN

250419.

48 4710
J9J94 80J8NS9
W SU89U8 46969

ՀՈՐԹԵՐԻՆ ՄՈՐԻՑ ԱՆՋԱՏԵԼՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ Ե

Անասնապահության պրակտիկան ցույց է տվել, վոր հորթը ծծելու միջոցով նորմալ չափով սնունդ է ստանում, վորովհետև պատահում է, վոր շատ է ծծում, դրա հետևանքով առաջ է գալիս մարսողության խանգարում, պատահում է, ընդհանրապես, քիչ է ծծում, սոված է մնում և լավ չի զարգանում: Այդ պատճառով հորթին նորմալ կերակրելու համար պետք է նրան իր ծննդյան առաջին օրից անջատել մորից և ամանով կերակրել:

Ծծելու սովորությունն ունի նաև մի շարք բացասական կողմեր, վորոնցից գլխավորներն են՝

1. Ծծելու դեպքում կաթի յուղալի մասը հորթն է ծծում, վորը նրա համար առանձնապես նշանակություն ունի, իսկ տընտեսության համար մեծ նշանակություն ունի:

2. Յերբ մայրը հիվանդ է լինում, շատ դժվար է լինում հորթին սովորեցնել ուրիշ կովի կաթը ծծելուն, վորովհետև ոտար կովը թույլ չի տալիս, իսկ մոր կաթը վտանգավոր է:

Իսկ յետը հորթն հիվանդ է լինում կամ սառնում է, մայրը հաճախ ալիս չի կթվում, ցամաքում է:

3. Հորթն աննորմալ է սնվում, կանոնավոր չի աճում և չի զարգանում:

ԻՆՉՊԵՍ ՀՈՐԹՆ ԱՆՋԱՏԵԼ ՄՈՐԻՑ

Առհասարակ խամածին կովի հորթը հեշտությամբ կարելի է անջատել մորից: Դրա համար անհրաժեշտ է ծնելուց անմիջապես հետո հորթը հեռացնել մորից և նրան բոլորովին ցույց չտալ:

Պատահում են խամածին կովեր, վորոնք սկզբնական շրջանում թույլ չեն տալիս իրենց կթելու, դրա վրա կով կթողը բոլորովին ուշադրություն չպետք է դարձնի, այլ մեծ համառությամբ պետք է տանի այդ դժվարությունները և վերջի-վերջո կհաղթահարի կովին և կսկսի շատ հեշտությամբ կթել:

Պատահում են խամածին կովեր, վորոնք նույնիսկ հորթով թույլ չեն տալիս կթելու, այդ ցույց է տալիս, վոր չկթվելու պատճառը միշտ հորթը չի, այլ նաև այն նյարդային դրությունը, վոր առաջ է գալիս դժվար ծննդաբերության հետևանքով:

Ավելի դժվար է բազմածին կովերի խնդիրը, այն պարզ պատճառով, վոր նրանք միջանի տարի հորթով են կթվել, նրանց մեջ ուժեղացել է մայրական զգացմունքը, և այլն:

Նման պարագայում խորհուրդ է տրվում հորթը բերել կովի մոտ. բայց բոլորովին թույլ չտալ, վոր ծծի, այդ ձևով կովը կսկսի լավ կթվել: *

ՑԱՆԿԱԼԻ ՅԵ ՄԻ ՀՈՐԹՈՎ ՄԻՔԱՆԻ ԿՈՎ ԿԹԵԼ

Յեթե առանց հորթի կթելն անհնարին է, ապա ցանկալի է մեկ հորթով կթել միջանի կով, վորպեսզի ձևն ունի մի շարք առավելություններ, այն է՝

1. Նման դեպքում շատ քիչ աշխատանք է գործադրվում հորթերը տանել-բերելու և ծծեցնելու վրա:

2. Հորթը նորմալ կերպով կանվի և ալիս: Փորձը ցույց է տվել, վոր մեկ հորթով կարելի է առնվազն 5—7 կով կթել:

Այդ կատարվում է հետևյալ ձևով. յերբ կովը ծնում է, հորթը պետք է անմիջապես անջատել, և նրա փոխարեն կովի մոտ տանել մի ուրիշ մեծացրած հորթ, նախապես իսկական հորթի մարմնի լրճունքից նրա մարմնին քսելով, վորպեսզի կոշի այդ հորթն ընդունի:

Այդ գործողությունը հեշտությամբ կարելի է կատարել այն ժամանակ, յերբ միջանի կով իրար հետ են ծնում: Այս դեպքում էլ չպետք է թույլ տալ, վոր հորթը ծծի, այլ միայն կովի մոտ լինի կթելու ժամանակ:

Այս ձևը ցանկալի է գործադրել սովորող-կոխողներում, միայն ծալբանդ դեպքում, յերբ կոշի առանց հորթի չի կթվում:

ՄԱՏՂԱՇ ՀՈՐԹԵՐԻ ԽՆԱՄՔԸ

Բավական չի միայն բավականանալ մատողաների ռացիոնալ կերակրումով: Մրա հետ միասին պետք է լուրջ ուշադրություն դարձնել նրանց բանիտարական առողջապահական պայմանների վրա:

Հաճախ պատահում է, վոր կեղտոտության պատճառով հորթերը ստանում են մի շարք հիվանդություններ՝ վորլուծ, պորտի

*) Այս մասին մանրամասն կարելի է կարգալ պրոֆ. Խ. Բերկյանի «Կոշի առանց հորթի կթելու անհրաժեշտությունը» գրքույկի

բորբոքում, աչքացավ, քոս կամ հորթը սաստիկ վնասվում են և այսպիսի մի շարք հիվանդություններ, վորոնք կասեցնում են նրանց աճման և զարգացման թափը, իսկ յերբեմն ել սատկելու պատճառ են դառնում:

Նման դեպքերից խուսափելու համար տնհրավեշտե՛

1. 15 որը մեկ անգամ բոլոր հորթերին սապոնով մաքուր պղացնել:

2. Մաքուր պահել հորթանոցը:

3. Ձմեռվա տաք յեղանակներին հորթերի համար կաղմակերպել կոլեկտիվ դրոսանք:

4. Որակյան 2 անգամ 5—8 աստիճան ծելսիուսի ջերմությամբ մաքուր ջուր տալ:

5. Հորթանոցի ջերմաստիճանը պետք է լինի 12—15 աստիճան ծելսիուսի:

6. Հորթանոցը պիտի հաճախակի ախտահանել (կրաջրով, կրեոլինով և այլն):

ԿՈԼԵԿՏԻՎ ՀՈՐԹԱՆՈՑՆԵՐ

Հորթերի կանոնավոր կերակրման, խնամքի և դաստիարակման համար մեծ նշանակություն ունեն կոլեկտիվ հորթանոցները: Մինչև հիմա դեռ գյուղերում նոր ծնված հորթերը պահում են մութ և խոնավ գոմերում, վորտեղ ողջ միանգամայն անտանելի չե հորթերի համար, կամ թե՛ նոր ծնված հորթը պահում են թոնիրի մոտ և զրանով պատճառ դառնում զանազան հիվանդությունների, քանի վոր տան ողջ միշտ փոփոխական են, վորովհետև գուռը մերթ փափ, մերթ բաց լինելով՝ սաստիկ ցրտում է:

Բացի այդ, սենյակում հորթն ուտում կամ ծամում է զանազան իրեր (փալաս, մոխիր, աթար, շոր և այլն), վորոնք պատճառ են դառնում զանազան հիվանդությունների:

Նորածին հորթերի խնամքը կաղմակերպելու համար պետք է մեր կոլեկտիվ տնտեսությունները կառուցեն կանոնավոր հորթանոցներ, ունենան հորթանոցներում հատուկ աշխատողներ և նրանց միջոցով կանոնավորեն հորթերի խնամքը:

Հայաստանի հորթաբուծական 60 ֆերմաներից միայն վեցն են սկսել հորթանոցների կառուցման աշխատանքները:

Ի՞նչ պահանջների պետք է բավարարել կոլեկտիվ հորթանոցը:

1. Նա պետք է լինի լուսավոր, դրա համար նրա լուսամուտների ամբողջ մակերեսը պետք է կազմի հատակի մակերեսի $\frac{1}{10}$ — $\frac{1}{12}$ ըդ մասը:

2. Նա պետք է լինի չոր, դրա համար պետք է կառուցվի վոչ խոնավ հիմքի վրա:

3. Պետք է ունենա օդափոխման խողովակներ:

4. Պետք է ունենա մսուրներ:

5. Պետք է լինի կրով սալիտակացրած:

6. Լուսամուտները պետք է լինեն յերկտակ՝ ձմեռվա ցրտից պաշտպանվելու համար:

7. Հորթանոցը պետք է ունենա բաժանմունքներ (վանդակներ) հորթերն ըստ հասակի խումբերում կամ առանձին-առանձին զրանց մեջ պահելու համար (տես նկ. 4):

ՀՈՐԹԱՆՈՑԻ ՈՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Թարմ ողը մատղաշ կենդանիների նորմալ աճման համար առաջնակարգ պայմանն է հանդիսանում: Թարմ ողը անհրաժեշտ է նրանց կանոնավոր շնչառության և արյան շրջանառության համար: Կեղտոտ, թարմ ողից զուրկ հորթանոցներում առաջ են գալիս զանազան հիվանդություններ (աղիքի բորբոքում, շնչառության խանգարում և այլն):

Նկ. 3. Ողափոխման խողովակ ըստ Մալիքի:

Հորթերի գոմի ողը պետք է միշտ մաքուր լինի, դրա համար հարկավոր է գոմում ողանցքներ շինել:

Հորթանոցներում նպատակահարմար է պատրաստել Մուլլերի սխեմայի ողանցք (տես նկար 3):

Այս ողանցքը տախտակից շինած մի չորս կողմանի յերկար խողովակ է, միջին խաչաձև 4 մասի բաժանված, դրա մի մասը դուրս է գալիս կտուրից վր և ունի ծածկոց, իսկ մյուս մասը առատաղից ցած է ուղղված և վերջանում է դռնակներով՝ լուսա-

քանչյուր կողմից մեկ հատ: Յերկու դռնակից մաքուր ուղեք եւ ներս գալիս, իսկ լերկուսից՝ կեղտոտ ողջ դուրս ե գնում:

Դռնակները նրա համար են, վոր խիստ ցուրտ ե քամի յեղած ժամանակ կարելի լինի ողանցքը փակել:

ՊԵՏԳ Ե ԿԱՆՈՆԱՎՈՐԵԼ ԿՈՎԵՐԻ ԾԻՆԸ

Դիտողությունները ցույց են տվել, վոր ավելի լավ են գորգանում այն հորթերը, վորոնք ծնվում են աշնան ե ձմեռվա ամիսներին ե վորոնք արոտի լեն դուրս գալիս 3 ամսական ե ավելի մեծ հասակում: Յերեք ամսականից փոքր հորթերը լավ չեն կարողանում ոգավել ամառային արոտներից, վորը նրանց զարգացման ու աճման համար խոշոր նշանակութուն ունի, բացի այդ, 3 ամսականից փոքր հասակում արոտ դուրս չեկած հորթերը նեղվում են միջատներից, ճանճերից, սարի անձրեններին ու ցրտին չեն դիմանում, դրա հետևանքով ել նրանք դանդաղ են աճում:




Նկ. 4. Հորթերի վանդակը (բաժանմունքներով):

Այս տեսակետից առանձնապես տուժում են ամառվա ամիսներին ծնված հորթերը, վորոնք համարյա թե արոտից չեն ողջուվում, քանի վոր մինչև 2—3 ամսական դառնալն արոտը չորանում ե:

Այս հանգամանքները նկատի ունենալով, պետք ե աշխատել հորթերի ծնունդը մեծ մասամբ դրել ուշ աշնանը ե ձմեռվա ամիսներին, այդ հաշվով ել պետի կանոնավորել կովերի բեղմնավորման ժամկետը:

Սրա մյուս առավելությունն ել այն ե, վոր կովի հղիության շրջանն անցնում ե ամառվա բարենպաստ ամիսներում, վորը նույնպես նպաստում ե լավ հորթ ստանալուն:

Սակայն, ի հարկե, բոլոր կովերի ծինն այդ ամիսներին պետք հնարավոր չեն, քանի վոր մեր բանվորական շրջաններին ե յուզապանրադործարաններին պետք ե կաթ մատակարարել տարվա բոլոր ամիսներին:



Նկ. 5. Հորթերի վանդակ:

ԱՐՈՏԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՏՆԱՇՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Փորձերը ցույց են տվել, վոր բացի կաթից հորթի ամենալավ կերը կանաչ արոտն ե, վորովհետև նա հարուստ ե այնպիսի սննդանյութերով, վորոնց կարծրը մեծ ե հորթերի ամենաարագ զարգացման շրջանում:

Բացի այդ, արոտային պայմաններում հորթերը հնարավորություն են ունենում ոգավելու բնության մյուս բարիքներից՝ մաքուր ողից, ջրից, արևից, զրոսանքից ե այլն:

Արոտային պայմաններում մեծացող հորթերն ունենում են ամուր ե դիմացկուն վոսկրակազմ ե առողջ որդանիզմ:

Սակայն մեզ մոտ հաճախ հորթերին հատկացնում են այնպիսի արոտավայր, վորը միանգամայն անհարմար ե նրանց համար, վորակով լավ բուսականությունից աղքատ ե:

Նման պայմաններում հորթերը կանոնավոր սնունդ չեն ստանում, կանոնավոր չեն զարգանում ե այդ անսորմալ պայմանները բացասաբար են ազդում նրանց հետագա արտադրողականությանը:

թխան վրա: Սրանից հետևում է այն, վոք մեր կոլեկտիվները պետ
է հորթերին հատկացնեն արտաի վորակյալ մասը, վորը հարուստ
լինի ոգտակար բույսերով:

Հորթերի արոտատեղը չպետք է հեռու լինի, վորովհետեւ յեր-
կար ճանապարհ գնալ-գալով նրանք կհոգնեն և լավ չեն արածի,
վորի հետևանքով քաշը վոչ միայն չի աճելու, այլ և կարող է
պակասել:

Անհրաժեշտ է նաև արոտային շրջանում հորթերին տալ
լրացուցիչ ուժեղ կերեր, մանավանդ արոտային ժամանակաշա-
նի սկզբին և վերջին, յերբ բուսականությունը քիչ է և հորթերը
չեն կշտանում:

Այն կոլտնտեսությունները, վորոնք հորթերի համար արո-
տատեղի չունեն, պետք է ստեղծեն արհեստական (ցանովի) արոտ
թիթեռնածողի բույսերից (առվույտ, յերեքնուկ, վիկ և այլն):

ՊԵՏՔ Ե ՄՏԵՂԾԵԼ ՄԱՏՂԱՇՆԵՐԻ ԽՆԱՄՔՈՎ ԶԲԱՂՎՈՂ ՎՈՐԱԿՅԱԼ ԿԱՅՈՒՆ ԿԱՐԵՐ

Մեր բոլոր միջոցառումները մատղաշ կենդանիների դարգաց-
ման համար խոշոր չափով կախված են այն բանից, թե մատղաշ-
ներ մեծացնող ֆերմաներն ինչ չափով են ապահովված վորակյալ
կադրերով (մասնագետներով), հորթապահներով, հորթաբաժներով:

Առանց լավ մասնագետների և դիտակից հորթապահների
մենք չենք կարող լավ հորթեր ունենալ: Մեր կոլեկտիվներում մատ-
ղաշների խնամքի գործը մեծ մասամբ հանձնարարում են ան-
փորձ, անվորակ մարդկանց, վորոնք չունենալով անասնապահա-
կան միտմունք գիտելիքներ և միաժամանակ լինելով անդիտակից
ու անբարեխիղճ, պետք լեզած ձևով չեն տանում հորթերի խը-
նամքն ու կերակրումը:

Մյուս կողմից մեր հորթաբուծական ֆերմաներն ապահով-
ված չեն անհրաժեշտ թվով մասնագետներով: Անհրաժեշտ է մեր
հորթաբուծական ֆերմաների համար հատուկ դասընթացների մի-
ջոցով պատրաստել վորակյալ հորթապահներ և միաժամանակ
ապահովել անհրաժեշտ թվով մասնագետներով:

ՄԱՏՂԱՇՆԵՐ ԱՃԵՑՈՂ ՖԵՐՄԱՆԵՐԻ (ՄԱՖ) ՀԱՄԱՐ ՊԵՏՔ Ե ՄՏԵՂԾԵԼ ԿԵՐԻ ԿԱՅՈՒՆ ԲԱԶՄ

Կերի ուժեղ բաղադրի կազմակերպումը հանդիսանում է սոց.
անասնապահության հիմնական աշխատանքներից մեկը, առանց վո-
րի չի կարելի լուծել անասնաբուծության պրոբլեմը: Այդ տեսակե-

տից, մեր սոց. սեկտորում դրուժյունը թերևս լավ չէ: Դեռևս
մեր շատ ֆերմաները չունեն կերի կաշուն բազա և դրա հետևան-
քով հաճախ ձմեռվա կեսին կերի պաշարը սպառվելու հետևանքով
անասունները կիսաքաղց են մնում մինչև գարունը բացվելը:

Կերով անապահով լինելու հանգամանքը դիտավորագրես հա-
տուկ է գյուղացիական անհատ փոշիացած տնտեսություններին,
սակայն սոցիալիստական տնտեսությունները հնարավորություն
ունեն ամուր կերի բազա ստեղծելու, ուստի պետք է լուծեն այդ
հիմնական խնդիրը:

Մատղաշներ անցնող ֆերմաները պետք է առաջին հերթին
պատրաստեն ամբողջ տարվա համար անհրաժեշտ կերի պաշարը՝
նախագես կազմված կերի պլան: Բալանսի համաձայն:

Մատղաշները պետք է ապահովվեն հետևյալ տեսակի կերերով՝

1. Կոպիտ կերեր (խոտ և դարման),
2. խտացրած կերեր (քուսպ, թեփ, վաբսակ և այլն),
3. Հյուսթալից կերեր (ճակնդեղ, կարտոֆիլ, դադար, սիլոս
և այլն):

Յեվրոպայի և Ամերիկայի անասունների բարձր արդյունավե-
տության «գաղտնիքներից» մեկն այն է, վոր անասունների կերի
խոշորագույն մասը կազմում են խտացրած կերերը: Այս իսկ պատ-
ճառով անհրաժեշտ է, վոր մատղաշներ անցնող ֆերմաները մեծ
ուշադրություն դարձնեն մատղաշները խտացրած կերերով ա-
պահովելու խնդրի վրա: աշխատելով այդ կերերը հայթաթել
հենց տնտեսության պայմաններում՝ համապատասխան կուլտու-
րաներ մշակելով:

ՀՈՐԹԵՐԻ ԽՄԲԱՎՈՐՈՒՄԸ

Ի նկատի ունենալով, վոր կովերի ծինը կատարվում է տար-
բեր ամիսներին և դրա հետևանքով տնտեսության մեջ լինում են
տարբեր հասակի հորթեր, անհրաժեշտ է կատարել հորթերի խըմ-
բավորում՝ ըստ հասակի և ըստ սեռի:

Մեր կոլտնտեսությունների համար պետք է պարզ լինի, վոր
միանգամայն աննպատակահարմար է տարբեր ամիսներում ծըն-
ված հորթերը միասին, մի հորթանոցում պահելն ու կերակրելը,
վորովհետև տարբեր հասակի հորթերը, տարբեր տեսակի խնամք
են պահանջում: 8 ամսական հորթի կողքին մեկ ամսական հորթը
չի կարող նորմալ սնվել և դարգանալ: Սրա հետ միասին անհրա-
ժեշտ է խմբավորել և իրարից անջատ պահել բոլոր արու և
եգ հորթերը 4—6 ամսական հասակից սկսած, վորովհետև լավ

վոջիներ, վերոնք խիստ վատ են աղդում նրանց զարգացման վրա:
Վոջիների առաջին առնելու համար հարկավոր է ձեռք առնել հետևյալ միջոցները:

1. Մաքուր պահել հորթերի մարմինը և բնակարանը:

2. Կանոնավոր կերակրել հորթերին:

Իսկ հորթերին վոջիներից ազատելու համար կարելի չէ ձեռնարկել հետևյալ միջոցներին.

1. Կանաչ սապոնով լողացնել:

2. Հորթի մարմինն ծխախոտի ջուր քսել, զրա համար հարկավոր է վերցնել 1 կիլո ծխախոտ և 6 կիլո ջուր, 30—40 բոպե յեռացնել, ապա քսել, քամելուց հետո խառնել նորից 2 շիշ ջուր և քսել հորթի մարմնին մաս-մաս:

3. Կրեոլինի $1\frac{1}{2}$ տոկոսանի լուծույթ քսել և այլն:

Այս դեղերից մեկն ու մեկը գործածելուց հետո հարկավոր է հորթին տալ ջրով լողացնել և հետո մարմինը լավ ցամաքեցնել:

4. Դ Ա Բ Ա Ղ

Դաբաղն արագ տարածվող հիվանդությունն է. բավական է տնտեսության մեջ մի անասուն վարակվի, արդեն շատ հեշտությամբ վարակվում են մյուսները:

Հորթը դաբաղով շատ հեշտությամբ վարակվում է բերանից և վոտքերից: Հորթը դաբաղով հիվանդանում է այն ժամանակ, յերբ նախիրը վարակված է դաբաղով և միաժամանակ վարակված է լիւծ և իր մոր կուրծքը: Յերբ հորթերի մի մասը վարակված է դաբաղով, անհրաժեշտ է վարակել և մյուսներին, վորպեսզի միաժամանակ առողջանան և հիվանդությունը չձգձգվի: Դաբաղը շատ կործանիչ ազդեցությունն է ունենում հորթերի զարգացման վրա: Յեթե դաբաղով հիվանդ հորթերին վատ են խնամում, նրանք սառկում են:

Դաբաղի ամենալավ դեղը մաքրությունն է և ուժեղ սնունդը: Հիվանդացած հորթերի վոտքերը պետք է որակաւն մեկ անգամ լվանալ կրեոլինի թուլ լուծույթով կամ կապույտ շերի լուծույթով:

5. ՄԿՆԱՏԱՄ (ԳՈՆԱՌԻԹՅՈՒՆ)

Այս հիվանդությունն առաջ է գալիս վատ խնամքից, կեղտոտությունից, յերբ հորթերին ամիսներով չեն մաքրում և լողացնում:

Մկնատամը վարակում է առաջին հերթին հորթի ծնոտը և ապա մարմնի մյուս մասերը:

Այս հիվանդությունը բժշկելու համար նպատակահարմար է՝

1. Տալ ջրով և կանաչ սապոնով լողացնել հորթերին:

2. Մաքրել վերքերը և ապա քսել ողու մեջ լուծված ձյութ (մեկ ճաշի զրալ ձյութը լուծել մեկ բաժակ ողու մեջ):

3. Հորթանոցները հաճախակի ախտահանել կրեոլինի թուլ լուծույթով կամ կրով:

6. Ք Ո Ս

Քոսը նույնպես վարակիչ հիվանդությունն է: Առաջ է գալիս հալաառողջապահական պայմաններից, վրտեղ հորթանոցը շատ կեղտոտ է լինում և հորթերին չեն մաքրում և այլն: Քոսի դեմ պայքարելու համար հարկավոր է կանաչ կամ հասարակ սապոնով (ոճառով), տալ ջրով լողացնել հորթերին և քսել կանեփի կամ կտավհատի ձեթ՝ ավելացրած $\frac{1}{4}$ մաս նալթ, ծծմբի փոշի դինատուրատի (սպիրտի) և ոճառի ջրի հետ (50 գրամ ծծմբ, $\frac{1}{2}$ լիտր գինատուրատ և 2 լիտր ոճառի ջուր):

Այս բոլորը կարելի չէ գործածել առանձին-առանձին, կամ խառնել իրար հետ, բայց անասնաբուժի խորհրդով:

Անհրաժեշտ է նախապես հիվանդ հորթի մաշկը մաքրել մազերից, լավ լողացնել, ապա նոր գործածել այդ դեղը:

7. Լ Ի Զ Ա Ց Ա Վ

Այս լիզելու հիվանդությունն է, վորն առաջ է գալիս կամ լիզող կովերին նմանվելով կամ հանքային նյութերով աղքատ կերեր ընդունելու հետևանքով: Ամեն մի տեսակ լիզումից առաջ է գալիս մաքրողություն խանգարում: Լիզելու դեմ պայքարելու համար հարկավոր է կերերին ավելացնել կալիճ, աղ, այրված վոսկրալուր և այլն:

Միաժամանակ պետք է հորթի գլխին վորոշ ժամանակ հագցնել դնչկալ (տես նկ. 6 և 7):

8. ՎՈՍԿՐԱՑԱՎ (ՌԵՎՄԱՏԻԶՄ)

Վոսկրացավ կամ ուղվատիզմ կոչվող հիվանդությունն առաջ է գալիս հորթերի մրսելուց, յերբ հորթանոցը շատ խոնավ և

ցուրտ և լինում: Ուստի այս հիվանդությունը կանխելու համար անհրաժեշտ է, վոր մեր կոլխոզների հորթանոցները լինեն չոր, լուսավոր և տաք. ջերմությունը պետք է լինի վոչ պակաս 12—13 աստիճան Ցելսիուսի:

Հիվանդ հորթերին պետք է տեղավորել տաք և չոր գոմում, վորից հետո վնասները պետք է շփել-տրորել քաֆուրի յուղով կամ սպիրտով և տաք փաթաթել:

ՄԵԿՈՒՍԱՐԱՆ (ԻԶՈԼԻՍՏՈՐ)

Հիշյալ հիվանդությունների տարածման դեմ պայքարելու համար հարկավոր է հորթանոցներում ունենալ մեկուսարան, հիվանդացած հորթին առանձնացնելու և շուտափույթ կերպով բժշկելու համար:



Լավ հիմունքների վրա դրված մեկուսարանը վարակիչ հիվանդությունների առաջն առնելու ամենալավ միջոցն է: Մեկուսարանը պետք է լինի չափազանց մաքուր, չոր, լուսավոր, Մեկուսարանում պետք է պահպանվեն հետևյալ կանոնները.

1. Որակա՞ն 3 անգամ մաքրել:
2. Խստիվ արգելել կողմնակի անձանց մուտքը մեկուսարան:
3. Ամիսը 2 անգամ ախտահանել կրեոլինի լուծույթով կամ կրաջրով:
4. Ողբ թարմացնելու համար տաք

Նկ. 6. Հորթի դնչալը.
յեղանակներին բաց անել ողանցքները:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՄԱՏՂԱՇՆԵՐ ԱՃԵՑՆՈՂ ՖԵՐՄԱՆԵՐՈՒՄ

Մատղաշներ աճեցնող ֆերմաներում պետք է աշխատանքը լավ կազմակերպված լինի, այն հաշվով, վոր չորաքանչյուր աշխատող գիտենա իր պարտականությունները և պատասխանատու լինի այդ գործին:

ԱՎԱԳԻ ՀՈՐԹԱՊԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Առանց ֆերմալի վարիչի թույլտվությամբ՝ կողմնակի անձանց չթողնել հորթանոցը տարափոխիկ հիվանդությունները խուսափելու համար:

2. Հետևել, վոր հորթերը ժամանակին կերակրվեն,
3. վոր հորթանոցը լինի մաքուր, լուսավոր,
4. վոր հորթանոցի ջերմությունը լինի 12—15 աստ. Ց.
5. վոր կաթը հորթերին տրվի թարմ վիճակում.
6. Հիվանդության դեպքեր նկատելիս անմիջապես հայտնել անասնաբուժին կամ ֆերմալի վարիչին:



7. Հիվանդ հորթերին տեղափոխել մեկուսարան:

8. Հետևել, վոր հորթերը ժամանակին արոտ տարվեն և ժամանակին լետ բերվեն:

9. Կատարել հորթերի խմբավորում՝ ըստ հասակի:

10. Հորթերին 10 որը մեկ անգամ կշռել և աճի համեմատ կերակրել:

Նկ. 7. Հորթը դնչալով.

11. Զթուլատրել, վոր հորթանոցում ծխեն:
12. Ցուրիկներին ժամանակին ամորձատել (կրտել):
13. Կատարել նոր ծնված հորթերի ճիշտ հաշվառում և այլն:

ՀՈՐԹԱՊԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Արգելել կողմնակի անձանց մուտքը հորթանոց:
2. Մաքուր պահել ձեռքերը, հագուստները, հորթանոցը և բոլոր իրերը:
3. Հորթին կերակրել վորոշված ժամերին, զոռտելնիկի ցուցմունքներով:
4. Հիվանդության դեպքեր նկատելիս հայտնել ավագ հորթապահին:
5. Կաթ տալուց հետո մաքրել հորթերի դունչը:

6. Ամառվա տաք ամիսներին 10 որը մեկ անգամ լողացնել հորթերին:

7. Կաթ տալուց հետո տաք ջրով մաքրել կաթի ամանները:

8. Հաճախակի փոխել հորթանոցի ցամաքարը:

9. Հորթանոցում կողմնակի և ավելորդ իրեր չպահել:

10. Ձմեռը տաք լեղանակներին հորթերը զրոսանքի հանել:

11. Տաք լեղանակներին բացել ողանցքները:

II. ԳՈՋԻՆԵՐԻ ԽՆԱՄՔԸ *)

Առողջ և ամուր գոջիններ ստանալու համար անհրաժեշտ է նրանց մասին հոգ տանել դեռ իրենց մոր արգանդում լեղած ժամանակից: Դրա համար անհրաժեշտ է՝

1. Ծնելուց 15 որ առաջ հղի մերուններին ջրկել ընդհանուր լերամակից և տանել հատուկ, նախապես անտահանված և կրով սպիտակացրած բաժին, ապա լվանալ կանաչ սապոնով և կրեոլինի 2 տոկոսանի լուծույթով:

2. Այն բաժնում, վորտեղ պետք է ծնեն մերունները, պիտի լինի 10—12 աստ. 3. Չերմուխուն:

3. Ծնող մերուններին պետք է հսկի ու խնամի փորձված խողապահ:

ՆՈՐԱԾԻՆ ԳՈՋԻՆԵՐԻ ԽՆԱՄՔԸ

Մերունը ծնելու ժամանակ պետք է անպայման մտադ մարդ լինի: Նորածին գոջիններին պետք է խսկույն վերցնել, քերանն ու քիթը մաքրել լորձունքից, անտահանված մկրատով կտրել պորտալարը (թողնելով 5—7 սմ. հիմքից հաշված), ապա պետք է գոջինների մարմինը սրբել մաքուր շորով և դնել արկղի մեջ, վորտեղ նախապես պիտի դրված լինի փափուկ ծղոտ (կամ խոշոր դարման):

Սողապահը պետք է հետևի, վոր մերունն իր ընկերքը չուտի, վորովհետև ուտելով և համի ընկնելով՝ ախուհետե կարող է իր գոջիններին ուտել:

Ծնվելուց 1—2 ժամ հետո պետք է գոջիններին տանել իրենց մոր մոտ՝ կերակրելու համար: Մորը ծնելուց պետք է թողնել ախքան գոջի, վորքան մերունը կաթ տվող պտուկ ունի: Ավելորդ գոջիններին պետք է կերակրել կովի կաթով կամ գցել այն մերունների տակ, վորոնք քիչ գոջիններ ունեն: Այդ գործողությունը պետք է կատարել զգուշությամբ, նախապես բոլոր գոջինների մարմինն քսելով վորևե հոտավետ նյութ, վորպեսզի մեմբունը չկարողանա ոտար գոջիններին տարբերել իր գոջիններից:

*) Գոջինների և դառների խնամքը գրել է ընկ. Ն. Մալոթյանը:

Սկսած 15 որակաւ հասակից, ձմեռը գոջիններին կարելի չի գուրս հանել զբոսանքի, յեթե մինչև 5 աստ. տաքութիւնն կա: Իսկ ամառը 5—7 որակաւ հասակից իրենց մայրերի հետ կարելի չի բաց թողնել արոտ, չերբ շաղն արդեն վերացած կլինի: Գոջի- ներին արոտին պետք է սովորեցնել աստիճանաբար 2—3 որվա ընթացքում, առաջին որերը միայն մեկ-չերկու ժամով գուրս թող- նելով, իսկ աչնուհետև ավելի չերկար ժամանակով:

Արոտի առաջին շրջանում պետք է գոջիններին պաշտպանել արևի կիպիչ ճառագայթներից:

Ահրաժեշտ է մեծ ուշադրութիւն դարձնել խողանոցի վան- ղակների, ցամքարի և կերամանների մաքրութեան վրա, խողա- նոցը տարվա մօջ առնվազն չերկու անգամ՝ դարնանն ու աշնա- նը պետք է խխտահանել և սպիտակացնել: Խողանոցի ամբողջ կահ-կարասիքը պետք է լվանալ և դուրս դնել արևի տակ:

Միաժամանակ պետք է հետևել գոջինների մարմնի մաքրու- թեանը, վոշնչացնել վոջինները՝ հաճախակի գոջինների մաշկին քսելով 2—3 մաս ձեթից և մեկ մաս կրիոլինից պատրաստած խառ- նուրդ դեղ:

Գոջիններին մոր ծծից կտրում են 2 ամսական հասակից, աստիճանաբար վերջին 4—5 որվա ընթացքում:

Մոր ծծից կտրելուց հետո պետք է գոջիններին ըստ հասա- կի, չաղութեան և ախորժակի բաժանել 20—30 գոջուց բաղկա- ցած խմբերի:

Տարվա տաք լեղանակին գոջիններին պետք է կանոնավոր կերպով 15 որը մեկ անգամ լողացնել տաք ջրով և սապոնով: Յուրա ժամանակ գոջիններին լողացնելը վտանգավոր է, պետք է միայն մարմինները մաքրել ըստական խողանակով:

Յերեք ամսական հասակից վորձ գոջիններին պետք է անջա- տել եզերից և առանձին պահել: 3—6 ամսական վորձ գոջիննե- րին կարելի չի պահել միասին խմբեր կազմելով, ամեն խմբում մինչև 100 գլուխ:

Պետք է հետևել, վոր վորձ գոջինների մեջ սեռական վատ սո- վորութիւններ (ոնանիզմ) չառաջանան:

Եգ գոջինները նուկնպես (3—8 ամսական հասակ ունեցողնե- րը) պետք է պահել խմբերով՝ ամեն մեկի մեջ 200-ական գլուխ, ամառը արոտում և լրացուցիչ ուժեղ կերերով:

Իսկ ձմռանը թե վորձ և թե եգ գոջինները պետք է պահվին 50 գլխից կազմված խմբերով:

Պետք է հետևել, վոր գոջինները վոշ չափից շատ կերակրվեն և վոշ ել քաղցած մնան, վորովհետև չերկու դեպքումս ել նրանց անը կթուլանա:

Չպետք է մոռանալ, վոր գոջինների մեծացման համար նրանց հիմնական կերը ամառը արոտն ու ուժեղ կերերն են, իսկ ձմեռը՝ ուժեղ կերեր, հյութալի կերեր՝ ճակնդեղ, գազար, կարտոֆիլ և այլն, փափուկ թիթեռնածաղիկ խոտեր և լրացուցիչ հանքային նյութեր (կալիւմ, վոսկորի ալուր, աղ և այլն):

Ընդհանրապես գոջինների նորմալ աճեցման համար մեծ նշա- նակութիւն ունեն սպիտակուցներով և վիտամիններով հարուստ կերերը, թիթեռնածաղիկ խոտերը, վիկ, սիսեռ, վոսպ, անարատ և քաշած կաթ, ձկան և վոսկրային ալուր, գարի, վարսակ, յե- գիպտացորեն և այլն:

Իրբև տահացու պահվելիք գոջիններին անհրաժեշտ է մեկ ամսական հասակից, բացի մոր կաթից, լրացուցիչ կերակրել գոլ անարատ և քաշած կաթով: Հեց այդ ժամանակից ել պետք է սկսել նրանց տալ բոված գարի և վարսակ: Գոջիններին լրացու- ցիչ պետք է կերակրել առանձին բաժանմունքում, վորպեսզի մե- ծերը չխանգարեն, և պետք է պահպանել խիստ մաքրութիւն:

Յերեք ամսական հասակից գոջիններին կաթ տալը կարելի չի գազարեցնել: Լրացուցիչ կաթի նորմալ ամբողջ ժամանակաշրջա- նում (մեկից մինչև 3 ամսական հասակը) պետք է լինի 10 լիտր անարատ և 20 լիտր քաշած: Յեթե տնտեսութեան մեջ կաթ չկա, կարելի չի տալ ձկան և մասվոսկրային ալուր: Յեթե դրանք ել չկան, այդ դեպքում կարելի չի տալ կտավնատի քուսպ, ծեծած սիսեռ կամ վոսպ:

Ձմեռը կարելի չի կազմել կերերի խառնուրդ, վորի մեջ մտնեն ուժեղ կերեր 50 տոկոս, թիթեռնածաղիկ խոտեր 10 տո- կոս, հյութալից կերեր 35 տոկոս, կենդանական ծագում ունեցող կերեր (մսի, ձկան ալուր և այլն) 5% և հանքային նյութերի խառնուրդ 10%:

Իսկ ամառվա կերը պետք է լինի 50% արոտ և 50% ուժեղ կերեր: Գոջիններին ծծից կտրելուց հետո մինչև 4 ամսական հասակը պետք է կերակրել որակաւ 4 անգամ, իսկ աչնուհետև 3 անգամ:

Գոջիններին պետք է տալ սեռակի տաքութեան մաքուր ջուր կերակրելուց 1 ու կես ժամ հետո:

Ահրաժեշտ է գոջիններին պարբերաբար կշռել սկսած ծն լե- լու առաջին որվանից, ապա լուրաքանչլուր ամիսը մեկ անգամ պարզելու, թե նրանք ինչպես են աճում:

III. ԳԱՌՆԵՐԻ ԽՆԱՄՔԸ

Գրառների խնամքը նույնպես պետք է սկսել ծնվելու մոմենտից: Հենց վոր դառը ծնվում է, մալրը վեր է կենում և սկսում է նրան լիզել. հենց այդ ժամանակ էլ պորտալարը կտրվում է: Յեթե լերքեմն պորտալարն ինքն իրեն չի կտրվում, պետք է անպայման հովիվն ինքը կտրի: Դրա համար անհրաժեշտ է պորտալարի հիմքից (պորտատեղից) ժատներով սեղմել, վոր արյունը միջից դուրս գա և 10 սանտիմ. լերկարութուն թողնելով՝ մնացածը կտրել զցել: Կտրված տեղում վերք է առաջանում, վորը վրտանգավոր է գառների համար. այդտեղից կարող են միկրոբներ առնանել գառան մարմնի մեջ և հիվանդութուններ առաջացնել (որինակ՝ փորլուծ և այլն): Դրանից խուսափելու համար անհրաժեշտ է պորտից կախ ընկած լարը 2—3 սմ. լերկարության վրա կապել պինդ թելով: Թելը պետք է նախապես ախտահանված լինի լիզոլի կամ կրեոլինի լուծույթով: Կապելուց հետո պետք է պորտալարի կտրված մասին քսել ձյութի և լիզոլի խառնուրդ (1 լիտր ձյութին 50 գրամ լիզոլ):

Գառը ծնվելուց թիչ հետո վառքի ցե կանգնում և փնտռում
ե իր մոր պտուկները. պետք ե ողնել նրան, վոր պտուկները
գտնի և ծծի:

Մեծ մասամբ մայրերը, հենց առաջին անգամից, ընդունում են իրենց դուռներին: Սակայն պատահում են մայրեր, մեծ մասամբ առաջնածիններ, վրդով չեն ընդունում իրենց դուռին և նրանից փախչում են: Պետք է ամեն կերպ աշխատել, վր մայրն իր դուռն ընդունի: Դրա համար մորն ու դուռն միասին թողնում են առանձին վանդակում այնքան ժամանակ, մինչև վր մայրը սովորի դուռն և թույլ տա ծծելու:

Պատահում են փոչխարներ, փորոնք 2 կամ 3 գառ են բերում և կաթ քիչ ունենալով չեն կարողանում բոլորին կշտացներ։ Այդպիսի դեպքերում մոր մոտ թողնում են մի գառ, իսկ մյուսներին գցում են ուրիշ գառ չունեցող կամ շատ կաթ ունեցող մոր տակը։ Վարպետը ոտաբ մայրը գառանն ընդունի, գառան մարմինն քսում են նրա ընկերքի լորձուռնքից, փորի հոտն առնելով մայրը գառանն ընդունում եւ։

Գառնները հիվանդանում և կոտորվում են մեծ մասամբ ծնվելուց հետո առաջին 10 օրը: Դրանից հետո արդեն քիչ են հիվանդանում և լավ են զարգանում: Գառների սկզբնական ամենատարածված հիվանդությունը սպիտակ փորրուծն է, վորը վարակիչ է: Յեթն այդպիսի դեպք է պատահում, հիվանդությունը չտարածվելու համար պետք է հիվանդներին և կառավածելիներին անջատել առողջներից և բնակարանն ախտահանել: Հիվանդ գառների պորտո պետք է անպայման ախտահանել և կապել:

Գաղտնեիրն պետք է տալ աղ և կավիճ, յերբ նրանք սկսում են ինքնուրույն արածել և կեր ուտել: Պատահում է, վոր հանքային Նյութերի պակասութեան հետևանքով գաղտնեիրն սկսում են ուտել իրենց մոր կամ ուրիշ գաղտնեիրի բուրդը կամ թե հենց իրենց բուրդը: Այդպիսի գաղտնեիրի ստամոքսը բրդից կեղտոտվում է և նրանք կոտորվում են:

Հենց վոր զառների մեջ, այդպիսի դեպք է նկատվում, պետք է հիվանդ զառներին իսկույն առանձնացնել, վորովհետև մյուս գառներն էլ կսկսեն նրանց որինակին հետևել և բուրդ ուտել:

Այս հիվանդություննից խուսափելու համար կամ պետք է աղ
ու կավիճ առանձին զնեի մսուրների մեջ կամ թե խառնելով խը-
տապրած կերերին, կերցնել զառներին: Կավիճ ստացող զառների
վոսկրակալքն ալելի լավ է զարգանում:

Յեթի պատահում են մայրեր, լորոնց կաթը շատ քիչ է և
գառանը չեն կշտացնում, պետք է այդ գառանը կերակրել կովի
կաթով: Պետք է տալ մաքուր, մինչև 37 աստ. տաք-ւթյուն ու-
նեցող կաթ և պետք է ստորեցնել քիչ քանակությունից սկսե-
լով և աստիճանաբար կաթն աճեցնելով: Կաթը գառանը կարե-
ւի չի խմացնել կամ լցնելով շին մեջ և բերնին ծծակ անցկացնե-
լով կամ ուղղակի մետաղյա ամանից:

Փորձերը ցույց են տվել, Վոբ աղլպիսի գառներին ուրական
100 դրամ կաթը բավական է։ Յերկու ամսականից հետո կարելի
էե տալ քաշած կաթ։ Յերկու-յերեք շաբաթվա հասակից գառներն
սկսում են փորձել խոտ և հատիկ ուտել։ Գառների համար լավ
ուտեստ են համարվում վարսակի, կտավհատի, քոսպի և ցորեն-
ուտեստ կեր և համարվում վարսակի, կտավհատի, քոսպի և ցորեն-
ուտեստ կեր և համարվում վարսակի, կտավհատի, քոսպի և ցորեն-
ուտեստ կեր և համարվում վարսակի, կտավհատի, քոսպի և ցորեն-
ուտեստ կեր և համարվում վարսակի, կտավհատի, քոսպի և ցորեն-

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋ ՄԱՍԻՔԻ

վորքան գառները մեկ որում կուտեն կվերջացնեն: Կերամոնները կամ մսուրներն ամեն որ պետք է մաքրել:

Փոքր հասակում լավ կերակրված գառներն ավելի լավ են աճում և մեծ վոչխարներ են դառնում: Գառների համար նույնպես մեծ նշանակություն ունի արոտը, թիթեռնածաղիկ բույսերը, հանքային նյութերով և սպիտակուցով հարուստ կերերը:



21.157